

ԱՆՑՅԱԼ ԵՎ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լեզվի պատմական փոփոխությունները ենթարկվում են որոշակի դասակարգման՝ ըստ լեզվական մակարդակների: Ընդ որում կարելի է առանձնացնել ներմակարդակային և միջմակարդակային փոփոխություններ: Վերջիններիս մեջ ուրույն տեղ ունի քերականացումը, որը բնորոշվում է որպես քերականական կայուն կառույցների աստիճանական առաջացում թույլ դիսկուրսիվ կառույցներից և միաժամանակ վերացական՝ քերականական միավորների առաջացում կոնկրետ բառային միավորներից: Ըստ գերմանացի լեզվաբան Մ. Հասպելմաստի քերականացումը խոսքին զուգահեռ առաջացող երևույթ է, որ արդյունք է հասարակական ներգործության՝:

Այսպիսով ենթադրվում է խոսքային իրացումների և քերականության կապը, այսինքն՝ այն, որ խոսքային իրացումներից են աստիճանաբար առաջանում քերականական կառույցները, որի մախապայմանը տվյալ երևույթի հաճախակի գործածությունն է²: Ինչպես նշում է Էդ. Ադայանը՝ «Որևէ լեզվական երևույթ աստիճանական ծավալումով ու տարածումով, լեզվի մեջ իր կիրառության դեպքերի քանակական կուտակման հետևանքով վերջապես դառնում է որակ, մինչդեռ հին երևույթը, աստիճանաբար իր տեղը զիջելով դրան, դուրս է մղվում լեզվից, մահանում»³:

Ըստ էության, քերականացումը տվյալ միավորի գործածության շրջանակի նեղացումն է և նրա հարացուցայնության աճը:

Այս կամ այն երևույթի քերականացման համար Ք. Լեմանը բերում է չափանիշների հետևյալ աղյուսակը՝

Հատկանիշներ	Հարացույց	Շարակարգ
Կապակցում	Հարացուցայնություն	Կցում
Փոփոխականություն	Հարացուցային փոփոխականություն	Շարակարգային փոփոխականություն
Կշիռ	Յուրացում	Գործածության շրջանակ

Ընդ որում քերականացման դեպքում հարացուցայնությունը և կցումը աճում են, իսկ մնացած բոլոր չափանիշները, այսինքն՝ հարացուցային փոփոխականությունն ու յուրացումը հարացույցում, իսկ շարակարգային փոփոխականությունն ու գործածության շրջանակը՝ շարակարգում՝ նվազում: Լեմանի աղյուսակում այն ստանում է հետևյալ տեսքը

Հատկանիշներ	Հարացույց	Շարակարգ
Կապակցում	+	+
Փոփոխականություն	-	-
Կշիռ	-	-

Այսպիսով քերականացումն ինքնին կախված է տվյալ միավորի հաճախակի գործածությունից, որն էլ պայմանավորում է նրա առավել կայունությունը լեզվական հարացույցում, նրա կենսունակությունը, այսինքն՝ անցումը նշույթավորվածությունից դեպի ոչ նշույթավորվածություն: Ընդ որում այս կամ այն երևույթի քերականացումը ենթադրում է տվյալ միավորի գործածության շրջանակի նեղացում, ամրագրում այս կամ այն իմաստին, որով էլ պայմանավորվում է տվյալ միավորի իմաստային զարգացումը այս կամ այն դիրքում, այսինքն՝ ոչ նշույթավորվածությունը:

Հին հայերենի անցյալ և անորոշ դերբայների ցուցիչների ծագումնաբանական ընդհանրությունը կասկած չի հարուցում: Հատկապես այդ մասին են վկայում հնդեվրոպական և մոստրատիկ լեզվաբանության տվյալները: Հայտնի է, որ հայերենի համապատասխան ցուցիչը բխեցվում է հնդեվրոպական * -I և մոստրատիկ * -IA ածականակերտ ածանցներից⁹:

Ըստ այսմ՝ և՛ որպես մոստրատիկ, և՛ որպես հնդեվրոպական նախածն այն վերականգնվում է ածականակերտ ածանցի տեսքով, այսինքն՝ ծագումնաբանորեն այն նախապես արտահայտել է հատկանիշի իմաստ: Սա էլ հերքում է դեռևս Ա. Մեյեյից եկած այն կարծիքը, որի համաձայն՝ և՛ անորոշ դերբայը, և՛ անցյալ դերբայը նախապես բայանուններ են եղել¹⁰:

Այսպիսով կանխադրվում է հայերենի վերոհիշյալ դերբայների նախնական ածականական բնույթը:

Սակայն ինչն է պատճառը, որ դրանք, ունենալով մույն ածանցը, այնուամենայնիվ հանդես են գալիս որպես տարբեր դերբայներ: Պատճառն անշուշտ մեկը չէ: Այստեղ կարևոր են և՛ այն հիմքերը, որոնց հանգում են այս ցուցիչները, և՛ այս դերբայների կիրառության ոլորտները: Ուստի անորոշ և անցյալ դերբայի հակադրությունները հանգում են առաջին հերթին հիմքային հակադրության, քանի որ անցյալ դերբայը կազմվում է աորիստի, այլ կերպ՝ կատարյալի, իսկ անորոշ դերբայը՝ ներկայի, այլ կերպ՝ անկատարի հիմքից:

Հայտնի է, որ հնդեվրոպականի ներկայի հիմքերը արտահայտել են գործողության շարունակականություն, իսկ աորիստի հիմքերը՝ գործողությունը որպես փաստ կամ գործողության ավարտվածություն¹¹: Աորիստի հիմքի արտահայտած գործողության ավարտվածությունից էլ բխում է անցյալ դերբայի սեռային առումով չեզոքությունը, որի հետևանքով էլ առաջանում է անցողական և անանցողական բայերի գործող անձի հոլովով արտահայտված հակադրությունը: Ինչպես գիտենք, անցյալ դերբայը կարող է հանդես գալ և՛ սեռական, և՛ ուղղական հոլովով ենթակայի հետ: Ընդ որում սեռական հոլովով ենթական գերիշխում է հիմնականում անցողական բայերի հետ, իսկ ուղղական անանցողական¹²:

Ինչ վերաբերում է անցյալ դերբայի խոսքային իրացումներին, ապա այն գործածվել է որպես՝

1. ածական որոշիչ (նախադաս և հետադաս): Հետադաս անցյալ դերբայը հոլովով և բովով հիմնականում համաձայնվում է գոյականների հետ¹³:

Եւ վասն մարմնագգեցութեան Որդոյ այսպէս հաւատամք, զի առ յանձն լինել մարդ կատարեալ յաստուածածին Մարիամայ սրբով Հոգւով ”:

2. ստորոգյալ առանց հանգույցի:

Չի կամ մեռցուք, և աղիս մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ, կամ զաջո-

դուքին մատանց մերոց ի նա ցուցեալ՝ ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք¹²:

Ընդ որում անցյալ դերբայը հնագույն վկայություններում առանց հանգույցի է հանդես գալիս և անցողական, և անանցողական բայերի հետ, որն էլ թույլ է տալիս ենթադրելու նրա նախնական անհանգույց գործածությունը:

3. ստորոգյալ՝ **եմ** հանգույցով, հատկապես անանցողական և անցողական բայերի կրավորական իմաստի արտահայտման դեպքում.

Ի նոյն իսկ գիրս գրեալ է՝ թէ եղ զնոսա ի հաստատութեան երկնից¹³:

4. ստորոգյալ՝ **եմ** հանգույցով, անցողական բայերի ներգործական իմաստի արտահայտման դեպքում.

Զպայն իսկ իմ աչօք տեսեալ է¹⁴:

5. ստորոգյալ՝ **լինիմ** հանգույցով.

...յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծաբեալ լինե¹⁵:

6. ստորոգյալ՝ **կամ** հանգույցով:

Ընկեցեալ կայր այսուհետև ոսկի և ոչ ոք առնոյր¹⁶:

7. ստորոգյալ՝ **ունիմ** հանգույցով.

...ինքն իսկ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղիս¹⁷:

8. դերբայական կառույցի բաղադրիչ, որտեղ այն ցույց է տալիս դիմավոր բային նախորդած կամ զուգահեռ կատարված գործողություն.

Իսկ Զաբէլին զայն լուեալ փութանակի հասանէր առ Դանիէլն¹⁸

Յին հայերենում անցյալ դերբայն առավել հաճախ գործածվում է ստորոգյալի դերում՝ հանգույցով կամ առանց հանգույցի: Ինչ վերաբերում է հանգույցով գործածություններին, ապա առավել հաճախ են հանդիպում **եմ** հանգույցով կառույցները, այն էլ հիմնականում անանցողական բայերի հետ:

Արտահայտելով ավարտվածության իմաստ՝ անցյալ դերբայն աստիճանաբար ամրագրվում է ստորոգյալի գործառնություն: Անցյալ դերբայի քերականացումը տեղի է ունենում որոշակի փուլերով: Յիմբ ընդունելով անցյալ դերբայի ցուցիչի ածականակերտ բնույթը՝ կարելի է փաստել, որ անցյալ դերբայի որոշչի գործառնությամբ նախնական է եղել: Հետագայս դիրքում նա համաձայնեցվել է գոյականի հետ, որից էլ բխում է նրա բայական իմաստը: Աորիստի հիմքից ծագելով՝ այն ունեցել է ավարտվածության իմաստ, որն էլ պայմանավորում է նրա սեռային առումով չեզոքությունը: Այս չեզոքությունն էլ վերածվում է ներգործական իմաստի՝ ենթական սեռական հոլովով դնելու ճանապարհով:

Ի դեպ, լեզուների տիպաբանությանը հայտնի է նախնական չեզոքության վերածումը ներգործական սեռի: Այսպես հետազոտելով հին հունարեն տեքստերը՝ Ա. Դեսնիցկայան հնդեվրոպական լեզուների համար սահմանել է, որ անցողականությունը բխում է նախնական անանցողականությունից, որը տարբերվում է հետագայում զարգացած անանցողականությունից իր բայահիմքի չեզոքությամբ և բացարձակությամբ, որն էլ արտահայտում էր ավելի լայն հասկացություն և ներառում էր բայահիմքի գործածության բոլոր տիպերը¹⁹: Այլ կերպ ասած՝ մինևույն բայահիմքը կարող էր արտահայտել և՛ անցողականի ու անանցողականի, և՛ պասիվի իմաստ:

Անցողականի զարգացումը հին հունարենում կապված է հայցական հոլովի զարգացման հետ, որն իրադրական իմաստից զարգացել է մինչև ուղիղ

խնդրի իմաստ: Միայն հայցականի արտահայտած ուղիղ խնդրի իմաստն է թույլ տալիս տարբերակելու անցողական և անանցողական բայերը⁶⁰:

Ուշագրավ է, որ հայերենի հիշյալ կառույցը նա ունի որոշ ընդհանրություն հունարենի վերոհիշյալ երևույթի հետ:

Անանցողական բայերի հանգույցով և անցողականի գերազանցապես առանց հանգույցի գործածումը, կարծում ենք, պատահական չէ, քանի որ հանգույցի արտահայտած վիճակի իմաստը չի ներդաշնակվում ներգործականի իմաստի հետ, եթե հաշվի առնենք այդ հանգույցի բովանդակությունը, այսինքն՝ նույնականության և ոչ թե պատկանելության իմաստը: Պատկանելության իմաստը, որից և բխում է այս կառույցի ներգործական իմաստը, արդեն արտահայտվում է ենթական սեռական հոլովով դնելու դեպքում: Մյուս կողմից՝ հանգույցի բացակայությունը անցողական բայերի դեպքում վկայում է այն մասին, որ հայցական հոլովով դրված գոյականը նախապես որպես ուղիղ խնդիր հանդես չի եկել: Հայերենում նույնպես հայցականի առկայությունն է որոշում ներգործականի գոյությունը: Նախնական չեզոքությունից զարգացած անցողականությունը նպաստում է նաև, որ ազատ հայցականը վերածվի ուղիղ խնդրի հայցականի:

Իսկ սա նշանակում է, որ անցյալ դերբայը, նախապես հանդես գալով առանց հանգույցի, հետագայում հանգույցով է գործածվել միայն անանցողական բայերի հետ, իսկ ավելի ուշ տարածվել անցողական բայերի վրա: Անցողական բայերի ներգործական իմաստի արտահայտման համար ենթական դրվել է սեռական հոլովով, որն **ունենալ** բայով շրջասացության մի տեսակ է: Պատահական չէ, որ արդեն **ունիմ** բայով անցողական կառույցները հանդես են գալիս ուղղական ենթակայով:

Այսպիսով՝ ավարտվածության իմաստից բխելով՝ այն վերածվել է պերֆեկտի իմաստի: Նրա բերականացման ուղին գրաբարում կարելի է նկարագրել հետևյալ փուլերով:

1. Ունեցել է ավարտվածության իմաստ և հանդես է եկել որպես որոշիչ, որից էլ բխում է նրա սեռային չեզոքությունը:

2. Նախնական անհանգույց գործածությունը ստորոգյալի գործառնություն:

3. Անանցողական բայերի և կրավորականի դեպքում ուղղական հոլովով ենթակայի գործածություն:

4. Անցողական բայերի ենթական սեռական հոլովով է դրվում և վերաբերում է հայցականին, որը հանդես չի գալիս որպես ուղիղ խնդիր:

5. Հանգույցն ավելացել է անանցողական բայերի դեպքում՝ կրկնակի նշույթավորելով նրանց վիճակի իմաստը:

6. Հանգույցը գործածվել է նաև անցողական բայերի հետ, որի պատճառով էլ ազատ հայցականն աստիճանաբար վերածվել է ուղիղ խնդրի պաշտոնում հանդես եկող հայցականի:

7. Ստեղծվել են նոր ձևեր **կամ**, **լինիմ** և **ունիմ** հանգույցներով: Ընդ որում եթե **կամ**-ը և **լինիմ**-ը հիմնականում հանդես են գալիս կրավորական իմաստի արտահայտման համար, ապա **ունիմ**-ը՝ ներգործականի: Ուշագրավն այն է, որ **ունիմ**-ով անցյալ դերբայի դեպքում ենթական դրվել է ուղղական հոլովով: Ի դեպ՝ այս կառույցը գրաբարում այնքան էլ տարածված և կենսունակ չէ⁶¹, որն էլ հուշում է նրա համեմատաբար ուշ առաջացումը:

Հայտնի է, որ բայածականի քերականացման աստիճանն ավելի ցածր է, քան ինֆինիտիվին²²։ Լեմանի աղյուսակի համաձայն՝ ավելի պակաս են հարացուցանությունն ու կցումը, և ավելի բարձր են շարակարգային փոփոխականությունը, յուրացումն ու գործածության շրջանակը, այսինքն՝ քանի որ նրա գործածության ոլորտներն ավելի շատ են, ապա քերականացումն ավելի դանդաղ է կատարվում։ Պարզապես որոշ միջավայրում այն սկսում է ավելի հաճախ գործածվել և ամրանալ այդ գործածություն։ Անցյալ դերբայի գործածությունը հին հայերենում առավելապես ի հայտ է գալիս կամ առանձին դիմավոր բայի դերում, կամ դերբայական կառույցում։

Անորոշ դերբայը, կազմված լինելով ներկայի հիմքից, չունի անցողականի և անանցողականի վերոհիշյալ հակադրությունը, քանի որ ներկայի հիմքն ինքնին նշանակում է գործողության շարունակություն։

Ինչպես հայտնի է, ինֆինիտիվը հնդեվրոպական լեզուներում ունեցել է առանձին զարգացում, և ընդհանուր նախածն նրա համար գոյություն չունի։ Սակայն լեզուների տիպաբանական ռաուսնասիրությունը որոշակի զաղափար տալիս է ինֆինիտիվի իմաստային զարգացման մասին։ Այսպես քննելով տարբեր լեզուներում ինֆինիտիվի արտացոլումները՝ գերմանացի լեզվաբան Մ. Հասպելմատը հանգում է այն եզրակացության, որ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական տարբեր լեզուներում ինֆինիտիվը բայանուն է եղել՝ դրված տրական, հայցական կամ ներգոյական հոլովներով։ Այս հոլովները, ըստ նրա, հին հնդեվրոպականում ծառայել են ուղղություն, նպատակ արտահայտելու համար, որից էլ նա եզրակացնում է, որ ինֆինիտիվի ծագումն ու քերականացումը բխում է նպատակի իմաստից, սա էլ իր հերթին՝ ուղղություն արտահայտելու իմաստից։ Ժամանակի ընթացքում քերականացված տարրերն ամրապնդվում են այդ գործածություն կամ վերասմրապնդվում։ Բերելով գերմաներենի օրինակը՝ նա նշում է, որ առաջին ամրապնդումը եղել է *zi/zu* նախդիրների նշույթավորմամբ։ Հաջորդը *um* – նախդիրն է, որին էլ սպասում է նույն զարգացումը, ինչ *zu*–ին²³։ Այլ կերպ ասած՝ երբ տվյալ ձևը սպառում է իր բովանդակությունը, առաջանում է նոր ձև՝ այդ բովանդակությունը արտահայտելու համար։

Ուշագրավ է, որ հայերենում նույնպես կարելի է տեսնել անորոշ դերբայի համանման զարգացման հետքերը։ Այսպես հին հայերենի անորոշ դերբայը հանդես է եկել հետևյալ դիրքերում։

1. **Ի** նախդիրի հետ՝ դրվելով հայցական հոլովով և ցույց տալով նպատակ։

Պատրաստ եմք ի սպանանել և ի մեռանել²⁴։

2. Ժամանակ, օրինակ.

Եւ ի տալ շրուանայ զբարսմունսն ցորմիզդ և օրինել զնա...²⁵։

3. Առանց **ի** նախդիրի, նպատակի պարագայի դերում։ Ընդ որում ավելի ուշ գրավոր վկայություններում, օրինակ՝ արդեն 7–րդ դարի հեղինակ Սեբեոսի պատմության մեջ անորոշ դերբայի գործածությունը նպատակի պարագայի դերում հիմնականում առանց նախդիրի է, օրինակ՝

Արդ՝ մինչդեռ առներ նա համար հանդիսի ի մէջ զօրաց իւրոց, տեսանել զթիւ կենդանեացն և մեռելոց...²⁶

4. Այնպիսի կառույցներում, ինչպիսին են՝ անորոշը հայցական, տրական և սեռական հոլովներով ենթակայի հետ։ Օրինակ՝

...կարծեցեալ զդիսն հասանել_նմա յազնականութիւն²⁷ (անորոշը հայցականի հետ):

...այլ նմա պարտ էր հարկանել զայն ապաստորութիւնն²⁸ (անորոշը տրականի հետ):

5. Նախորդավոր և աննախդիր կառույցների հետ տարբեր հոլովածներում: Օրինակ՝

Այլ վասն համառօտելոյ զճառս՝ բաւական լիցի ասացեալս վասն նորա²⁹ (սեռական հոլով),

...համարձակ պատուելով Շամիրամայ զախտն՝ առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ...³⁰ (գործիական հոլովով):

Անորոշ դերբայի քերականացումը հին հայերենում ավելի ուժեղ չէ, քան անցյալ դերբայինը, քանի որ այն դեռ չի ավարտվել և նրա գործածության շրջանակը նույնպես աստիճանաբար է նեղանում: Հին հայերենի տեքստերի քննությունը ցույց է տալիս, որ առավել հաճախ անորոշ դերբայը գործածվում է նպատակի և ժամանակի պարագայի դերում, ինչպես նաև միադիմի բայերի հետ: Ընդ որում եթե նպատակի իմաստի համար *ի* նախորդով դրսևորումների թիվը քիչ է, ապա ժամանակի պարագայի իմաստի արտահայտման համար՝ բավականին հաճախ: Մեր կարծիքով՝ սրա պատճառը քերականական համանունությունից խուսափելն է, այսինքն՝ այստեղ ունենք տարածականից ժամանակայինին անցած միտումը: Սա պայմանավորված է նաև *ի* նախդրի իմաստային զարգացմամբ:

Ի նախդրի նախնական իմաստն, ըստ Գ. Ջահուկյանի, առկայության, տեղի կամ ներգոյականի իմաստն է, որի հետ էլ կապված են ուղղության և անջատման տեղի իմաստները: Ընդ որում ուղղության իմաստից էլ առաջացել է նպատակի պարագայի արտահայտությունը: Այնուհետև տեղային իմաստն անցել է ժամանակային իմաստին և նշանակել այն ժամանակը, որի մեջ կատարվել է գործողությունը³¹:

Ուշագրավ է, որ նպատակի իմաստը երկրորդաբար արտահայտվում է նաև *առ+ի* նախդրի միջոցով, որը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ *ի+անորոշ* դերբայ կառույցն աստիճանաբար դադարում է նպատակի իմաստ արտահայտելուց, և անհրաժեշտություն է առաջանում այդ իմաստը արտահայտելու նոր միջոցներով: Օրինակ՝

Վասն որոյ ոչ միայն գովել արժան է զքեզ, այլ և ի վերայ քո աղօթել՝ առ ի լինել քեզ միշտ այդպիսի³²:

Անորոշի հայցական և տրական հոլովներով ենթական պայմանավորված է հիմնական բայի արժույթով: Ցավոք, հին հայերենում չեն պահպանվել անորոշը հայցականի հետ կառույցի քերականացման նախորդ փուլերը, որոնք դրսևորվում են այս կառուցի հետ այնպիսի բայերի գործածությամբ, ինչպիսին են՝ *տեսնել*, *լսել*, որտեղ կարելի է տեսնել անորոշի նախնական տեղային իմաստի արտահայտումը: Կամ էլ, թերևս անհիմն չէ այն տեսակետը, որի համաձայն հայցականն անորոշի հետ կառույցները հայերենում հունարենի ազդեցության արդյունք են³³: Նշենք, որ անորոշը հայցականի հետ կառույցը հին հայերենում հանդես է գալիս *կամիմ*, *համարիմ*, *ասել* և *միադիմի բայերի* հետ³⁴:

Մյուս կողմից էլ աստիճանաբար գործածական են դառնում անորոշի հոլովված ձևերը, որտեղ դերբայը գործածվում է գոյականաբար:

Այսպիսով հին հայերենի անորոշ դերբայը, մեր կարծիքով, քերականացվել է հետևյալ քայլերով՝

1. ի նախդիրի հետ միասին ցույց է տվել ուղղություն, նպատակ,
2. այնուհետև՝ ժամանակ,
3. սկսել է առանց նախդրի արտահայտել նպատակ,
4. վերածվել է լրացական կառույցի ստորոգյալի՝ հանդես գալով տարբեր հարկադրական-պարտավորական և անհրաժեշտության գաղափար արտահայտող միադիմի, ինչպես նաև **ասել**, **համարիմ**, **կամիմ** բայերի հետ, երբեմն էլ տրամաբանական ենթական արտահայտելով հայցական կամ տրական հոլովների միջոցով.

5. կորցնելով իր նախնական իմաստը՝ այն աստիճանաբար գործածվել է նաև գոյականաբար՝ ենթարկվելով հոլովման:

Այսպիսով ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ անցյալ և անորոշ դերբայների քերականացման ուղիները ի սկզբանե տարբեր են եղել՝ կապված նրանց հիմքային տարբերությունների հետ, որոնցով էլ պայմանավորված են նրանց իմաստային զարգացումն ու կիրառության ոլորտները, ինչպես նաև քերականացումը: Եթե անցյալ դերբայը նախնական չեզոքությունից և ածականական գործածությունից քերականացվում է պերֆեկտային իմաստով ստորոգյալի գործածություն, ապա անորոշ դերբայը նախնական նպատակի պարագայից քերականացվում է լրացական կառույցի ստորոգյալի գործածություն:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ M. Haspelmath, Grammatikalisierung: von der Performanz zur Kompetenz ohne angeborene Grammatik. In: Krämer, Sybille & König, Ekkehard (eds.) *Gibt es eine Sprache hinter dem Sprechen?* (Suhrkamp Taschenbuch Wissenschaft), Frankfurt am Main: Suhrkamp, 2002, 269:
- ² M. Haspelmath, Kontrolle und Subjektausdruck bei Infinitiven und Konverben. In: Maas, Utz (ed.) *Infinitive* (Publikationsreihe der Forschungsstelle für Artikulationsprozesse, 2) Osnabrück: Socolo, 1997, S. 77.
- ³ Էդ. Բ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 611:
- ⁴ Ch. Lehmann, Thoughts on grammaticalization: a programmatic sketch. -Cologne: Universität zu Köln, Institut für Sprachwissenschaft, 1982.
- ⁵ В.М. Иллич-Свитыч, Опыт сравнения ностратических языков, 2, М., 1976, с. 20.
- ⁶ A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1903, p. 97.
- ⁷ Հմմտ. Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004, էջ 120:
- ⁸ А. Н. Савченко, Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, с. 276.
- ⁹ Հմմտ. H. Jensen, Altarmenische Grammatik, Heidelberg, 1959, S.133-134.
- ¹⁰ Հմմտ. Դ. Ս. Ալեքսիսյան, Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1992, էջ 100: R. Stempel, Die infiniten Verbalformen des Armenischen, Frankfurt am Main, Bern, New-York, 1983, S. 27.
- ¹¹ Սահակ Պարթև եւ Մեսրոպ Մաշտոց, Պատասխանի թղթոյն Պրոկղի: Տես Հայոց լեզվի պատմության քրեստոմատիա: Գրաբար և միջին հայերեն, Եր., 1987, էջ 15:
- ¹² Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1981, (I, ԺԱ), էջ 42:
- ¹³ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 130:
- ¹⁴ Եզնիկ Կողբացի, Զվ. աշխ., էջ 70:
- ¹⁵ Կորիւն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, (հատվածներ): Հայոց լեզվի պատմության քրեստոմատիա: Գրաբար և միջին հայերեն, Եր., 1987, էջ 54:

- ¹⁶ Եղիշե, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Եր., 1957, էջ 134:
- ¹⁷ Նույն տեղում, էջ 200:
- ¹⁸ Նույն տեղում, էջ 88:
- ¹⁹ А. В. Десницкая, Из истории развития категории глагольной переходности, "Памяти академика Я. В. Щербы", Л., 1951, с. 139.
- ²⁰ А. В. Десницкая, указ. соч., с. 141–142.
- ²¹ Ս. Ս. Սաֆարյան, Անցյալ դերբայով կազմված վերլուծական ժամանակները և նրանց պատմական զարգացումը հայերենում, ԲԵՀ, 2005, 1, էջ 159:
- ²² M. Haspelmath, Kontrolle und Subjektausdruck bei Infinitiven und Konverben. In: Maas, Utz (ed.) *Infinitive*. (Publikationsreihe der Forschungsstelle für Artikulationsprozesse, 2) Osnabrück: Socolo, 1997, S. 63.
- ²³ M. Haspelmath "From purposive to infinitive — a universal path of grammaticization," *Folia Linguistica Historica* 10.1–2: 1989.S. 287–310.
- ²⁴ Եղիշե, նշվ. աշխ., էջ 73:
- ²⁵ Եզնիկ Կողբացի, նշվ. աշխ., 1914, էջ 80:
- ²⁶ Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1964, էջ 364:
- ²⁷ Եղիշե, նշվ. աշխ., էջ 83:
- ²⁸ Եզնիկ Կողբացի, նշվ. աշխ., Թիֆլիս, 1914, էջ 127:
- ²⁹ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., Եր., 1981, (I, Բ), էջ 10:
- ³⁰ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., Եր., 1981, (I, ԺԵ), էջ 60:
- ³¹ Գ. Բ. Զահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 133:
- ³² Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1981, (I, Ա), էջ 6:
- ³³ Հմմտ. նշվ. աշխ., էջ 49:
- ³⁴ Է. Ս. Մկրտչյան, Հայցական հոլովով ենթական գրաբարում, ԼՀԳ, 1967, 6, էջ 51:

Гагинян А.Р.

ГРАММАТИКАЛИЗАЦИЯ ПРИЧАСТИЯ ПРОШЕДШЕГО ВРЕМЕНИ И ИНФИНИТИВА В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Статья посвящена грамматикализации причастия прошедшего времени и инфинитива в древнеармянском. Несмотря на аналогичность показателей вышеупомянутых форм с генеалогической точки зрения, пути их грамматикализации с самого начала были разными. Это было связано с различиями их основ, чем и обусловлено семантическое развитие и область употребления этих причастий, а также их грамматикализация. Если причастие прошедшего времени из первоначальной нейтральности и употребления в качестве прилагательного преобразуется в функцию сказуемого в перфектном смысле, то инфинитив грамматизируется из первоначального обстоятельства цели в функцию сказуемого в конструкции дополнения.

Gaginian A. R.

THE GRAMMATICALIZATION OF THE PAST PARTICIPLE AND INFINITIVE OF OLD ARMENIAN

The article is about the grammaticalization of the past participle and infinitive of Old Armenian. The thing is that having the same indicator, at the same they apply different semantic and practical usage which brings forth differences among their grammaticalization. If the infinitive originates from the meaning of purpose and becomes an complement structure, then the past participle develops from the meaning of the state to the meaning of perfect.